ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐՈՒ «ՕՅՈՒՆՋՅԱՆ» ՄԻՋՆ.
ԴՊՐՈՑ-ՎԱՐԺԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ШИРАКСКИЙ РЕГИОН
ГЮМРИЙСКАЯ СРЕДНЯЯ
ШКОЛА- ЛИЦЕЙ «ОЮНДЖЯН»

---


✉ 3107 ք. Գյումրի Մ. Մկրտչյան 47

✉ 3107 г. Гюмри М. Мкртчян 47

☎ 0312-3-24-57


<< 02>> օգոստոսի 2019թ.

N 157

*ՀՀ Շիրակի մարզպետ*

*Պարոն՝ Տ. Պետրոսյանին*

*Հարգելի՜ պարոն մարզպետ,*

*Համաձայն Հայաստանի Հանրապետության ԿԳՆ-ի N396-Ն հրամանի, տեղեկացնում ենք Ձեզ ՀՀ Շիրակի մարզի «Օյունջյան միջնակարգ դպրոց-վարժարան » պետական ոչ առևտրային կազմակերպության ֆրանսերենի (3 դասաժամ) թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին :*

*Կից Ձեզ ենք ուղարկում հայտարարությունը:*

***<<Գյումրու «Օյունջյան» միջնակարգ դպրոց-վարժարան>> ՊՈԱԿ-ի***

***Տնօրենի ժ/պ՝*** *Ա. Աղամյան*

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
11847-19

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու «Օյունջյան» միջնակարգ դպրոց-վարժարան» ՊՈԱԿ-ի ֆրանսերենի (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձև 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 28-ին ժամը 15:00-ին, Շիրակի մարզի Գյումրու «Օյունջյան» միջնակարգ դպրոց-վարժարանում, հասցե՝ ք. Գյումրի Մ.Մկրտչյան 47: Տեղեկությունների համար զանգահարել՝ (0312)3-24-57 հեռախոսահամարով:

Հիմնական պարտականությունները.

Աշխատել հիմնական դպրոցի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և ուսումնական պարտադիր ծրագրի պահանջներով: